սումարանի չինութեան համար քաղաքային հողից յարմարաւոր և վայելուչ տեղ, իսկ չինութեանը Նպաստամատոյց հանդիսացան եղբարք պ. պ. Լալայենանք և Քալանթարեանք։

Իսկ ինչ որ վերաբերում է վանքի չինութեանը, որ դեռ պկսած էլ չէ, սորա համար աշխատել է Նոյնպէս մեր նախկին առաջնորդ գանիել Աղբենպիսկոպոսը, որ արժանաչիւտասակ Մատթէոս կաթողիկոսի թոյլտուութեամբ ժողովել էր նուէրք հազար բուրլ. չափ, այդ գումարը երկար ժամանակ մնալով Աղբուտի բանկում աճել է և հասել մինչև 2000 բ., այժմ այս պատրաստի և ուրիշի աշխատած գումարը մեր քաջագործ թագէոս եպիսկոպոսը ծախս է անում անմնացամակ և անօգուտ կերպով և ժամանակին յայտնի կը մնեն վնասները։

Մեր սրբազանը, այո, ունի և գեղեցիկ յատկութիւններ։ Նա չափազանց բարեսիրտ է և միանգամայն միամիտ։ Նա շատ սիրում է հանգիստ ապրել, իսկ ազգային գործերը, եկեղեցիների և եկեղեցականների բարեկարգ կառավարութիւնը և պաշտպանութիւնը թողած է իր գլխաւոր վարդապետի անգէտ կառավարութեան։

Գիշեալ վարդապետը այն ասփնան բանացել է խեղճ քահանաների վրա, որ մի ամենայնչին զանցառութեան համար նրանց փիլոնը վեր է առնում առանց կոնսիստորիայի գիտութեան կամ Ամենի իրաւասութեան։ Նա զրկում է քահանաներին քահանայագործութեան իրաւունքից որքան ժամանակ կամենում է, և առանց փիլոնի կանդնեցնում է եկեղեցու դրանը։ Սորանից կարելի է նկատել, թէ, կոնսիստորիայում գործերի ընթացք տալու ժամանակ, այդ խեղճ տգամիները ինչ նշանակութիւն և և ձայն կունենան և թէ ինչպէս է պաշտպանվում օրէնքը և կարգը։—Մի յայտնի իրողութիւն, յունիսի 29-ին սրբազանը իր վարդապետի թեկադուութեամբ, ընդդէմ կարգի, ինքնագլուխ կերտէ և մայր եկեղեցու երեցփոխի գրամարկղը և մի քանի օրից յետոյ հրաւիրում է ժողովրդին ընտրել երեցփոխան պ. Թալափեանցի տեղ, որի ընտրութեան երեք տարի ժամանակը դեռ ես լրացած չէ։ Հրաւիրված ժողովրդից ներկայանում են միայն 20 հոգի, որոնք բաժանվում են երկու կուսակցութեան, մի կողմը պահանջում է բացատրել Թալափեանցի յանցանքը իր պաշտոնի մէջ, և եթէ յանցաւոր է, ապա ընտրութիւն անել։ Բայց մեր խաղաղասէր սրբազանը, չնայելով վեհափառ Հայրապետի հեռագրին, որով պատուիրել էր դադարեցնել ընտրութիւնը մինչև գործի հանգամանքի պարզվելը, փողոցներում ստորագրել է տալիս ընտրողական թղթին, ծուռ հասկացնելով թէ պ. Թալափեանցը հրաժարական է տուել, իսկ պ. Ամենի հեռագրական է, որպէս թէ ժողովուրդն է ընտրութիւնը արել և ինքը ամենևին չէ մասնակցել։ Ի հարկէ այդ ամէնը նրա վարդապետի գործունէութեան արդասիքն են, որ գցել է ժողովրդի մէջ վրդովմունք, խռովութիւն և կռվմուկ քաղաքում գանգան կուսակցութիւններ։ Այդ ամենի հետևանքը ինչն ըստ ինքեան յայտնի է, թէ ինչ կը լինի։ Վերջապես Ներսիս սրբազանի և նրա վարդապետի խարդախները յաղթող են հանդիսանում, զրկում են պ. Թալափեանցին երեցփոխանութեան պաշտօնից։ Այդ ամէն իրողութեանց մասին հեռագիրներով և ինդրագիրներով յայտնված է Նորին Վեհափառութեան, բայց թէ ինչ եղաք կունենայ գործը, դեռ անյայտ է։

Մի հայ

ՆԱՄԱԿ ԱՍՏԱԽԱՆԻՑ

—

Օգոստոսի 10

Զարհուրելի և անբնական դրութիւնը մեր հարց, մարց, եղբարց ու քոյրերի Թիւրքաց Հայաստանում, որը պատկերացրած էր թանձր և սև ներկերով ձեր պատուական լրագրի 115 համարում «Հրաւէրքն զլխագրով, վրեցրուց մեզ մեր պարտաւորութիւնը դէպի հայերը, որոնք բնակվում են մեզանից հեռու և պահպանում են հայրենեաց սուրբ օրէրցը։ կարող ենք արդեօք ազնուապես հպարտանալ բնակվելով Ատրպատական ճոխութեան և չքեղութեան մէջ մոռացած բոլորովին մեր քաղցած եղբայրներին և քոյրերին, ոչ. մենք այն ժամանակ կը լինինք արժանի ասելի քան յանդիմանութեան։ վասնորոյ, մենք՝ Եղիսաբէթ Զաքարեան Պօղոսեան ց և Հռիփսիմէ Գաբրիէլեան կազակվեանց վճռեցինք, առանց յետաձգելու օգնել նրանց մեր կարողութեան և մինչև չափ և սահմանանված գումարը չորս հարիւր ութսուն բուբլի (480 բ.) ուղարկելով մեզ Յովհաննէս Գէորգեան Կիտայեանցի մեռամբ, խնդրում ենք ճանաչարել ըստ պատկանելոյն և ի միաժամանակ բազմց հրատարակել նուիրատուաց անուններն ձեր թերթի մասակայ համարների մէջտեղ։ հանգանակութիւնը դեռ չարունակվում է։

Ահա նուիրատուների անունները։ Սոֆիա Յովհաննէսեան Բեկզէլեանց 100 բ., Եղիսաբէթ Տէր-Զաքարեան Պօղոսեանց 25 բ., Թագիի Յակոբեան Պօղոսեանց 25 բ., Մարիամ Յովհաննէսեան Պօղոսեանց 25 բ., Մարիամ Գրիգորեան 2 բ., Ուսուֆինայ Սարգսեան Պաշանով 1 բ., Սողոմի Զաքարեան Տէր-Միքայէլեանց 5 բ., Անյայտուհի 1 բ., Անյայտուհի 5 բ., Թագիի Մելքայէլեան Ասատուրեանց 10 բ., Եղիսաբէթ Յարութիւնեան Ասատուրեանց 5 բ., Կարապետ Արտեմով 20 բ., Զաքարիա և Միհէնն Սարգսէկեանց 10 բ., Օվանեա և Եղիսաբէթ Հաղվերդեանց 15 բ., Աննա Փարսադանեանց 10 բ., Անյայտուհի 3 բ., Եղիսաբէթ Զիմզիդեանց 5 բ., Մաքսիպեղ է Սարգսեանց 5 բ., Շուշան Ֆրանգուլեանց 3 բ., Մարիամ Ֆրա՝ Հալվերդեանց 3 բ., Սոֆիայ Ֆրանգուլեանց 3 բ., Աննա Կիտայեանց 10 բ., անյայտուհի 1 բ., Եկատերինա Յովհաննէսեան Ջանումեանց 10 բ., Եղիսաբէթ Ազամյանեանց 10 բ., Եղիսաբէթ Ֆրանգուլեանց 5 բ., Մաքսիպեղ Սարգսեանց 5 բ., Եկատերինա Յակովլեանց 10 բ., Եղիսաբէթ Գալստեան Մարտիրոսեանց 3 բ., Դարիա Դաւիթեան Սարգսեանց 3 բ., Եկատերինա Սարգսեան Սարգսեանց 1 բ., Հռիփսիմէ Յովհաննէսեան Սարգսեանց 8 բ., Աննա Գրիգորեան Ֆարբիկեանց 3 բ., Եկատերինա Մկրտչեան Պօղոսեանց 3 բ., Եկատերինա Յովսեփեան Պօղոսեանց 5 բ., Ռիփսիմէ Կարապետեանց 10 բ., Անյայտուհի 5 բ., Անյայտուհի 3 բ., Անյայտուհի 2 բ., Եղիսաբէթ Թելկեեանց 5 բ., Անյայտուհի 3 բ., Մելանիա Սուքդուկեանց 3 բ., Գարրիել Բուրջալեանց 3 բ., Ասիի Կարապետեան Մուզդուսեանց 3 բ., Մաքդալինէ Գալստեան Լալայեանց 3 բ., Եղիսաբէթ Գալստեան Սարգսեանց 2 բ., Եղիսաբէթ Բարխուդարեանց 3 բ., Եղիսաբէթ Լիսիցինեանց 2 բ., Մելանիա Միսէնեան Արգսարեանց 5 բ., Եղիսաբէթ Յարութիւնեան Արգսարեանց 3 բ., Գայանէ Արգսեան Արդարեանց 3 բ., Գայանէ Միկրտչեան Միզանդարեանց 3 բ., Եղիսաբէթ Միզանդարեանց 5 բ., Անյայտուհի 1 բ., Եղիսաբէթ Ասատուրեան Զիմզիդեանց 2 բ., Անյայտուհի 1 բ., Յակոբ Մաքսիմբեանց 2 բ., Յովհաննէս Յակոբեան Զաքմախասեանց 7 բ., Մարիամ Մարտիրոսեան Կիտայեանց 10 բ., Եկատերինէ Գէորգեան Թելկեեանց 10 բ., Թագուհի Գէորգեան Մերճարեանց 5 բ., Մարթա Ստեփանոսեան Աւետեանց 2 բ., Անյայտուհի 1 բ., Մարիամ Յակոբեան Զարդիչեանց 10 բ.։

Այդ հանգանակութեան գումարն է չորս հարիւր և ութսուն բուբլի (480 բ.) որը խնդրեմ սատակ սոյն ծրարեալ տոմսակի № 474 համարաւ Թիֆլիսի թագաւորական Բանկից։

Յ. Գ. Կիտայեանց

ՆԱՄԱԿ ԹՄՐԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 22 օգոստոսի

Ցաւն ամա է, որ մենք երեսփոխանի պաշտօն ենք վարում Թիֆլիսի «Ցորաբաշի ս. Գէորգ» եկեղեցում։ Թէ ինչ ենք արել այդ քան ժամանակավ ընթացքում և ինչ ենք անում, դորա մասին ուեւլորդ ենք համարում խօսել։ Այդքանը միայն կասենք, որ եկեղեցին և նորա գաւթում գտնված հանձնուն ծխական զդրոցը մեր հոգացողութեան դլխաւոր առարկաներն են եղած մինչև և են։

Եկեղեցին որ մի խարխուլ չինութիւն է, վաղուց դրաւում էր իր վրա մեր ուշադրութիւնը։ և մենք նորա վերանորոգման նպատակն իրագործելու համար՝ մեր ձեռքից եկած աշխատանքը չենք խնայել և չենք խնայում։—Գալով ուսումնարանին պէտք է ասել, որ ոչ տեղի դիրքը, ոչ եկեղեցու գաւիթը և ոչ զպրոցական սենեակը ամենևին ուսումնարանի յարմարութիւն չունեն։ Ուստի մենք մեր օրերումս մտադրված էինք՝ թէ եկեղեցու տանիքի հարկաւոր կարկատանները անելու և թէ ուսումնարանը տեղափոխել Հալաթարի մի կենտրոնական տեղում և յարմարաւոր բնակարանում, որի համար և հարկաւոր բանակցութիւններն ըսկսել ենք՝ ում հետ հարկն է։

Բայց մենք այս համառօտ տեղեկութիւնը տուինք այն պատճառով, որ մեր ասածները փոքր ի շատ կապ ունեն ձեր լրագրի № 145-ում ներկին լուրերի մէջ տպված հետևեալ տողերի հետ,—«Ցորաբաշու ս. Գէորգ եկեղեցու գրքերից այս օրերս երկու ապիսներ վայր ընկան և վիրաւորել են մի քանի աշակերտներին, որոնք գաւթում խաղալիս են եղել։ Պ. Ն. Նազարեանցն է երեցփոխան այդ եկեղեցու. մի և նոյն ժամանակ այդ եկեղեցու զպրոցի ուսուցիչն է»։

Այդ տեսակ բան չէ եղած։ Մէկ որ՝ մեր եկեղեցին կրամիտով է ծածկված, չէ թէ ագուռով. երկրորդ՝ որ կրամիտները գլխերով վեր ընկան, ուրեմն աչակերտներ չէին էլ կարող գանվել գաւթում։

Գալով լուրի այն մասին, ուր ասված է, թէ մենք մի և նոյն ժամանակ այդ եկեղեցու զպրոցի ուսուցիչ ենք,—այդ սուտ է։ Մենք այնտեղ ուսուցիչ չենք։ Սորան էլ կը վկայեն ոչ միայն թեմական վերատեսուչը՝ այլ և նոյն զպրոցի ուսուցիչները ու աշակերտները և նոյն եկեղեցու քահանան ու ժամկոչը։

Ն. Նազարեանց

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օգոստոսի 26-ին, վաղ առաւօտեան, քաղաքիս Հալաթարի ասված թաղի պոլիցիականները գտան Հալաթարի մայդանի մի պատի անկիւնում մի նորածին մանուկ։ Պոլիցիականները իսկոյն տարան երեխային և յանձնեցին մի կնոջ, որ պահէ, մեծացնէ իր համար երեխային։

—

ՆՈՒՄՈՒՌ յայտնում են, որ պոլսեցի յայտնի դերասան պ. Ագամեանը իր խմբով դիտաւորութիւն ունի այդ քաղաքը գալ։ Նամակագիրը յայտնում է, որ յաջողութիւն չէ կարող գտնել, որովհետև նուիրեցիք չափազանց անառարեր են դէպի բեմական արվեստը, և այժմ զուարճանում են մի ձեռնածուի ֆոկուսներով, որ Աբէլի աչկերան է։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Հուսքը այս տարվա մի քանի շաբ օրերի պատճառով անաջող եղաւ և ինչպէս երևում է էժանութիւնը հացի վրա այս տարի էլ լինելու չէ։ Այս տարվա անշնչան ցանքերից գոյացած արդիւնքով անցեալ տարվա իր պարարքը վաճառականին վճարելով, գլուղացուն շատ քիչ հաց կը մնայ և նա դարձեալ ստիպված կը լինի այս տարի էլ իր ցորեան պաշարի մեծ մասը վաճառականներից գնել։»

—

ՕՐԴՈՒԲԱԴԻՑ մեզ գրում են, որ օրերումս քաղաքի բնակիչները ընտրելով իրանց համար մի արժանաւոր և ժամանակիս պահանջներին յարմար քահանայացու, արդէն խնդիրքով գիմել են ուր հարկն է, որպէս զի շուտով իրանց ընտրածը ձեռնադրվի։ Թիֆլիսցը յոյս ունի, որ հոգևոր իշխանութիւնը ուշադրութիւն կը դարձնէ օրդուբադցիների խնդրքի վրա, որոնք 6 տարի առանց քահանաներին հաւաքէ բոլորին ի միասին և ուղարկէ Ջաճկա-Հայաստան անգլիական միսիոնարների դէմ մրցելու։

Դարձեալ փասա։

Մի խօսակցութիւն երկու «պասիսլիկների» մէջ։

—Կարդացիր հայ-աւետարանական նամակը «Մշակի» մէջ։

—Կարդացի, ինչպէս չէ։

—Ցեսար որ՝ «Մշակը» բողոքական է դարձել։

—Հա, «Մշակը» բողոքական է դարձել։

—Հարկաւոր է անշուշտ այսպէս հասկացնել ժողովրդի գռեհկի դասակարգին։

—Հա, հարկաւոր է անշուշտ այսպէս հասկացնել ժողովրդի գռեհկի դասակարգին։

—Գուցէ այս միջոցով հնար լինի վնասել «Մշակի» ժողովրդականութիւնը։

—Այո, գուցէ այս միջոցով հնար լինի վնասել «Մշակի» ժողովրդականութիւնը, թէ չէ ուրիշ միջոց չը կայ։

—Ուրեմն գրենք մեր «պառաւ աղուէսին», որ այս կրօնական հարցի մասին միչտ գրէ ու գրէ։

—Անպատճառ. գրենք մեր «պառաւ աղուէսին», որ այս մասին միչտ գրէ ու գրէ։

Ողորմելի կարճամտներ....

Մի քանի օրից յետոյ գրվում և ուղարկվում է Թիֆլիս մի նամակ հետևեալ բովանդակութեամբ։

Մեծապատիւ «պառաւ աղուէս»

«Սրբազան պարտականութիւն ենք համարում այս նամակաւ ուղարկել ձեզ մեր մեծ շնորհակալութիւնը։ Դուք էիք, որ մեր ազգային միութիւնը երկպառակտողների դէմ քաջ սխրեան հանդիսացաք և չը թողիք, որ մեր եկեղեցին քանդէին։ Հաւատացէք, եթէ դուք չը լինէիք, հիմի մեր եկեղեցին վաղուց քանդած, հիմի ի վեր տապալած կը լինէին և մենք էլ հայութիւնից դուրս եկած, առաջվայ նման էլի «էմն-իսրայէլացի» եղած կը լինէինք։ Ինչպէս ուրիշ ազգային ծառայութիւնների մէջ էլ, զոր. նուիրատուութիւններ հաւաքելու, ժամանակակից նոր մտքեր արտայայտելու, ազգայնութեան գաղափարը ազգի մէջ արծարծելու և ազգի անջատված մասերը ի միութիւն հրաւիրելու, և այլն,—ինչպէս որ այս ամէն ազգօգուտ հարցերի և խնդիրների մէջ, կրկնում ենք, միչտ սկզբնապատճառ և հերու էք հանդիսացել, այս հարցի մէջ էլ կրկին ցոյց տուիք ձեր վառ ազգասիրութիւնը և տիրացուական հայեացքները։ Ինչպէս կարելի է մոռանալ ձեր արած այս մեծ, մեծ ծառայութիւնները, մանաւանդ մեր մանուկ գրականութեան ցոյց տուած ծառայութիւնը։ Դուք չատ մեծ զարկ տուիք մեր գրականութեանը։ Զը նայելով, որ քանի տարվանից ասելի է հրատարակում էք, և ահա բաւականին յեռագիմութիւն էք արել առաջադիմութեան մէջ։ Շարունակեցէք, շարունակեցէք անդադար գրել, գիշեր ու զոր այս կրօնական հարցի մասին գրելուց չը դադարել և հաւատացած եղէք, որ ձեր անտրակալ գրուածների համար կարդացողներից մինչև այսպէս մեծ մեծ շնորհակալութիւն կը ստանաք և հեշտագին էլ չափից դուրս կը բարձրա....Բայց ափսոս որ ձեր չարաբաստիկ ասողի տակ ծնվելը մեծ արգելափի է դառնում այս բարձրանալուն։ Այս չարագուշակ դժբաղդութիւնը ձեր գլխից հեռացնելու համար, առաջարկում ենք ձեզ հետևեալ բարեկամական խորհուրդը։ Դիմեցէք մի ազգասգով Սուլթան-Համիդի հմայող—ասորոլզմեռիից մեկին և թախանձեցէք նրան որ մի դիւթական զօրութեամբ չարաբաստիկ ասողը հեռացնէ ձեր գլխից և նրա տեղ մի բարեբաստիկ ասող զետեղէ։ Թէ չէ, որքան էլ ճշմարտութիւններ քարոզէք, ապերասիս մարդիկը թոյլ չեն տայ իրանց հաւատալ ձեր խօսքերին և դուք էլ միչտ յետ ու յետ կը գնաք, քանի որ այդ թշուառական ասողի տակ էք...»

Ստորագրված են՝ ընդունակ յեռագիմական Զ. և ուրիշները.

Էլի փասա։

Թէ ինչպէս է խօսում տէրը իր ստրուկների հետ—պ. Թաղալեաններ, էս դուք էք հաստատել թէ՝ հասարակական գործողների հետ վարվում են այնպէս, ինչպէս վարվում է հովիւը ոչխարներին փարախի մէջ։ Ներս անեալ։

Ոչ, ոչ, թող ասեն, դուք մի՞ք հաւատայ, թէ մենք ենք ստորագրել մեր կամքով։ Այսինքն մենք չը գիտէինք թէ՝ այդպիսի սիրական ձեռվ կը խօսեին մեզ հետ, այդպէս սատակ կը բարկանային մեր վրա, թէ չէ «խոլի կանէինք» չէինք հաստատի. իսկ դուք արդէն համոզված էք, որ ձեր ստուերն անգամ ահարկու է մեզ համար։

—Հապա դուք ինչպէս համարձակեցաք... և այս խօսքերից յետոյ քանդի սպառնալիք, ոտքի դիրքում և ահա մեր քաղաքային չաներ պաշտպանները բոլորը փախչում, թաղվում են մի անկիւն։

Ի դէպ է այստեղ, ընթերցող, մէջ բերել մի առակ, որ շատ յարմար է մեր հասարակական գործողների վերաբերութեանը։

Մկները բոլորվին ճանձրացած և յուսահատ կատուի հալածանքներից, հաւաքվեցին մի օր, ժողով կազմեցին, խօսեցին, խորհուրդ արին, խորհեցան երկար ու բարակ, որ մի զանգակ կախ տան կատուի վզից, որ նրա գալը առաջուց իմանան և չը բռնվին։ Խորհրդի ժամանակ բոլորն էլ քաջ էին ձևանում և պռատ, պռատ անում, բոլորն էլ պարտականութիւն էին յայտնում զանգակը կախ տալու։ Այսպէս պատրաստվում են և սպասում են կատուի գալուն։ Եւ ահա յանկարծ երևում է մամման կատուն և մեր քաջ մկները ամենը փախչում են մի ծակ սրտատրատ։

—«Փաստերդ էլ մինչև, փաստերդ էլ վարդ-գրված...»—մամման է քթի տակ անողք ընթերցողը։ Ներեցէք, ընթերցող, սրանից աւելի պարզաբանելու գրիչս ապատմրում է ինձ դէմ։ Շատ անգամ բանն այն չէ պարզ գրեն, այլ պարզ հասկանան. ըստ որում մեզանում դեռ փչով ու տատասկով է ծածկված գրականական ասպարէզի մէջ այն ուղին, որ կոչվում է հարուածողական։

Ցեղոյի

նայի են Մեսգիլ։ Այսպէս է հոգում մեր եկեղեցին իր հօտի մասին։

—

«Моск. Вѣд.» լրագիրը լսել է, որ աչքի առակն ունենալով Ռուսաստանի այլ և այլ տեղերում ցէնզորների անհնչ թիւը, կառավարութիւնը դիտաւորութիւն ունի դարձեալ մի քանի քաղաքներում, մասնաւորապէս կենտրոնական քաղաքներում, հաստատել նոր ցէնզորների տանձնական պաշտօններ։

—

Խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին կարդալ առանց «Слово» ամսագրի յունիսի տետրակում ուշադրութեան արժանի մի յօդուած «Религіозное движеніе на югѣ Россіи» վերնագրով։

—

«Новое Время» լրագիրը լսել է որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը գիտաւորութիւն ունի վերցնել միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում ընդունված սովորութիւնը չարախտակաւոր թուանշաններ դնել աչակերտներին, որովհետև իւրաքանչիւր չարթվայ ընթացքում չափվում է նրանց ուսման առաջադիմութիւնը։

—

Լինչպէս լսվում է Ներքին գործերի մինիստր, կոմս Մ. Լորիս-Մելիքով, որ այժմ Լիվադիայումն է, Գրիմի մէջ, այնտեղից գալու է Թիֆլիս, իր ազգականների հետ տեսնվելու համար։

—

Քանի մի օր է արդէն, որ եղանակը ԹԻՖԼԻՍՈՒՄ փոխվեցաւ։ Այժմ բաւական հով է, գրեթէ ամեն օր անձրևներ են գալիս և գիշերները մինչև անգամ ցուրտ է անում։

—

„Тифл. Объявленія“ լրագիրը լսել է, որ սեպտեմբերին կամ հոկտեմբերին կրկին կը սկսի հրատարակվել „Тифлисскій Вѣстникъ“ լրագիրը, որ մի քանի ժամանակ դադարած էր հրատարակվելուց։

—

ՆՈՒԻՈՒՈՒՑ մեզ գրում են որ ակցիզի մի քանի ատենակալներ խիստ կոպիտ կերպով են վարվում. Նրանցից մէկը պատահելով մի սափրիչի սկսեց փոքրացում իր ձեռքի հատ փայտով ծեծել նրան, որովհետև սափրիչը նրա մազերը ծուռը կերպով էր կտրել։ Բայց թէպէտ այն ատենան հարյուր գրուանան մէջ էր գտնվում, որ ամենն առ արկայ նրա աչքին ծուռն էր երևում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆՑ մեզ գրում են. «Յուլիսի 27-ին քաղաքից 7 վերստ հեռաւորութեամբ Սուրբ Խաչ վանքին ուխտ լինելով, բազմաթիւ ժողովուրդ վանքի պարտէզին մէջ նուագարանաց հնչմամբ, երգելով և երգելով զուարճացան։ Այդ պարտէզը իր զովասուն ազիրներովը կերպով էր կտրել։ Բայց թէպէտ այն ատենան հարյուր գրուանան մէջ էր գտնվում, որ ամենն առ արկայ նրա աչքին ծուռն էր երևում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆՑ մեզ գրում են. «Յուլիսի 27-ին քաղաքից 7 վերստ հեռաւորութեամբ Սուրբ Խաչ վանքին ուխտ լինելով, բազմաթիւ ժողովուրդ վանքի պարտէզին մէջ նուագարանաց հնչմամբ, երգելով և երգելով զուարճացան։ Այդ պարտէզը իր զովասուն ազիրներովը կերպով էր կտրել։ Բայց թէպէտ այն ատենան հարյուր գրուանան մէջ էր գտնվում, որ ամենն առ արկայ նրա աչքին ծուռն էր երևում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆՑՈՒՄ մեզ գրում են հետևեալը, օգոստոսի 6-ից. «Այս կողմերս անձրևները հնձող մեզ կը նպաստեն։ Բայց օգոստոսի 4-ի սաստիկ զովումով անձրի մը գալով, քաղաքին դուրս իզի գործարան մը „Сальникъ“ չանձնարվելով պրեսացաւ, բայց առանց մարդու մը վնաս տալու, վասն զի ոչ ոք կար մէջը։»

—

Մի պարսն խնդրում է մեզ տպել հետևեալ նկատողութիւնը. «Ներկայ տարուայ Համարձման տօնին, Թիֆլիսեցի մի պարսն Ներսիսովի վանքի գաւիթում, սեղան է դնում և նուէրներ է հաւաքում յոգուտ Հայաստանի սովտանչներին։ Պարոնը հաւաքում է մինչև 12 բուբլ և մինչև այժմ նուէրատու անձինք տպասելով, ոչինչ տեղեկութիւն չեն տասցել նուէրների վերաբերութեամբ։ Ցանկալի է իմանալ, թէ այն փողերը ինչ բաների վրա է գործադրել պարոնը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

—

Ակհալտսիխի Անգղիոյ երեսփոխանական ժողովոյ յուլիս 23-ի նստին մէջ Ի Նպաստ և ընդդէմ Հայոց խոստաւած ատենաբանութեանց կարևոր մասերն, որոց մէջէն բնականաբար կը յայտանէ սէրութեան զգաչ կէտերն, ինչպէս որ մեր պարքն է։

Պ. ԳԼԱՏՍՈՆ, իբր տուած տեղեկութեան հաստատմամ, խօսք առաւ Փոքր-Ասիոյ և Արմենիոյ վիճակին վրայ ուշադրութիւն հրաւիրելու համար։ «Արևելեան խնդրոյն ոչ մէկ մասն ընդհանրապէս Ասիական Թուրքիոյ վիճակիրոյ մասին չասի կարևոր է։ Թափառիկ ցեղերու ձեռքէ Հայոց կրած տառապանքն որը, ինչպէս իրենը կրնն, Նորմաններուն յանգիցա սարսափելն դարպրելն Ի վեր կը տևեն, վերջին 20 տարիներու մէջ աւելի սաստկացան, և սկսան Թուս տէրութեան համակրութիւնը գրաւել, որ բազմաթիւ Հայ ժողովուրդ մ՚ունի։ Ռուսի Ազատէվմասոսի դաշնագրին մէջ յօդուած մը գրուած էր Հայոց պաշտպանութիւն ընձեռելու համար, որով Թուռն յանձն առաւ Ի գործ դնել առանց տեղական պիտոյից պահանջած բարենորոգումներու։ Այդ յօդուածը փոփոխութեամբ մ՚ընդունուեցաւ Պերլինի դաշնագրին մէջ, և արձանագրեցաւ թէ Թուռն իւր ձեռք առած միջոցները պարբերաբար պիտի իմացնէ տէրութեանց, որք անոց գործադրութեան պիտի հսկեն։ Ուրեմն, կատարեալ իրաւունք ունիմք պահանջելու որ Թուռք դաշնագրին այդ յօդուածը գործադրէ։ բայց թէպէտ այդ յօդուածն ընդունուելէն Ի վեր երկու տարի աւելի ժամանակ անցաւ, և մեր կառավարութիւնը Լոռա Սալիսպերիի և Սըր Հէրբի Լէյըրսի միջոցաւ սպասեց գ՚Թուռն Ի գործ դնել բարենորոգումներն, այսուամենայնիւ ոչինչ եղաւ այդ ուղղութեամբ և գործոց վիճակն ամեն, ամիս աւելի զէշցած է։ Արդի նախարարութեան պաշտօնի անցնելէն ետքը Դրան հաղորդուած հաւաքական ծանուցագրին այս նիւթիս վրա զօրաւոր դիտողութիւններ կը պարունակէր, և Անգղիական կառավարութիւնը Դրնէն պահանջած էր բացորոշապէս ճշդել թէ ինչ միջոցներ ձեռք առած էր Պէրլինի դաշնագրին գործադրութեան համար։ Բայց աւելի յառաջ չը գնացած, կուգամ քանի մը խօսք ընել Անգլո-Թուրք պայմանագրին նկատմամբ, որ յայտ նշանաւոր պաշտօնագիր մ՚էր։ Այդ պայմանագիրը լոկ պայմանական խոստում մ՚էր ինչ ինչ բարենորոգումներ Ի գործ դնելու, և այդ պաշտօնագրին իրաւազիտական մեկնութեան նայելով, այն միակ միջոցն, որով մեր կառավարութիւնը մտադրեալ բարենորոգմանց գործադրութիւնը ձեռք բերել կրնայ յուսալ, Դրան Ասիական երկիրներուն պաշտպանութիւնն է։ Անգլո-Թուրք պայմանագրին դէմ մեծ առարկութիւն մը սա էր թէ միայն Մեծին Բրիտանիոյ համար իրաւունքներ կը հաստատէր և այսպէս յաջողութիւնը կը դժուարացնէր, բան որում տէրութեանց մէջտեղ գործողութեամբ միայն կարելի էր ազդեցութիւն բանեցնել Դրան վրայ։

«Պնդմամբ թէ Արմենիոյ վիճակին ի՞նչ է այժմ։

«Հայք սա չորս գլխաւոր բաներէ կը գանգատին.—Դրոց Ծանրութիւնն և Պաղպէդիոյ պահանջում, երբ ժողովուրդն անկարող վիճակի մէջ էր գանգատ վճարելու, հողերու անիրաւագրում, և մանաւանդ եկեղեցական հողերուն գրաւումը. գատական ապօրինութիւնք և Քրիստոնէից վիրաւորութիւն և Քրիստոնէից վիրաւորութիւն։ Բոլոր այս գանգատք ժողովոյս անդամոց ձեռք գանուող Կապոյտ Տետրակներու մէջ յիշուած են, և Վ.Հ. Թաղուէոյն հիւպատոսը նոցա ճշդութիւնը հաստատած են։ Տեղական իշխանութիւնք Քուրդերը զսպելու և գանգատուած միւս չարիքները նուազցնելու արամադրութիւն չը ցուցին։ Եւ յիրաւի, ժողովրդեան թիւը կարելի եղածին չափ նուազեցնելու համար ներկայ սովին օգուտ քաղելու արամադրութիւն կեցած եղան։ Բայց թէպէտ և այդ եղաւ։ «Հայկական խնդրոյն վերջ տալու եղանակն Հայոց վերջ տալն է։» Որ այս չարիքներն յերկարին, Դուռը կը պնդէր թէ Արմենիոյ մէջ ոճիրներուն միջին քանակութիւնն Եւրոպոյ շատ կողմերուն մէջ Ի գործ դրուող ոճիրներու միջին քանակութիւնէն աւելի չէ։ Դրան մի ուրիշ պատասխանն այս էր թէ Հայք թուով այնքան քիչ են, որ բաղդաւոր անկարևոր են։ Բայց Հայոց Պատրիարքարանէն իմ ստացած վիճակագրութիւնս նայելով, չորս նահանգաց մէջ բնիկ Հայոց թիւը բնիկ Իսլամ ժողովրդեան թիւէն շատ աւելի մեծ է։ Հայոց գանգատած անկարգութիւններն ուրանալի յետոյ, Թուրքերը կարգ մը բարենորոգումներ ծանուցին, որոց արդէն ընդունված էինք Իրմէ պատերազմէն Ի վեր, և որք հետևաբար ոչ ևս արժէք ունէին։ Դրան այժմ ծանուցած բարենորոգմանց ամենամեծ մասն 1863 էն Ի վեր հրապարակի վրայ է, և ձեռք բերուած արդեանց վրայ դատելով, ինչ յոյս կրնայ լինել թէ ապագային մէջ բարեգործում յառաջ պիտի բերին։ Ինչ բնելու է ներկայ խոստմանեալ չարիքները դարմանելու համար։ Քիմի վրայ բարենորոգմանք անցեալին մէջ օգուտ չէին ունեցած և ապագային մէջ ալ չը պիտի ունենան։ Պէտք եղածն՝ ոչ թէ միջոցներու՝ այլ մարդերու փոփոխութիւն մ՚է։ Այսպէս նոր գժուարութիւն մը կայ. նախ՝ պարիկցա մարդ գտնելու գժուարութիւն, և անոնց իշխանութիւն տալու գժուարութիւններ։ Մարդու մը պարիկցութիւնն իսկ կրնայ վնասակար լինել իրեն իբրև նահանգին կառավարիչ։ Պարիկցա մարդ մ՚ստանալու բարեպաշտ Մահմետական մը կրնայ լինել, բայց բարեպաշտ Մահմետական մը ոչ-մահմետականայ նկատմամբ անիրաւ կը լինի։ (Պ.Ա. Պ.ն կ՚ազատակին անդամք ամանք։) Այո՛, անդամք ամանք կրնան «ոչ» ըսել, բայց Արևելից մէջ բնակիչներուն վիճակութիւնն անհնար կընէ տարակուսիլ թէ այս այսպէս է։

«Մահմետականք իրենց տեսակէտով իրաւունք ունին, և այս բանին համար գանգատ յարգել կը պարտիմք։ Իրոդութիւնն այս է սակայն թէ ոչ մէկ Իսլամ կառավարիչ յարմար էր գ՚Քրիստոնեայս կառավարելու *)։ Ժողովրդեան ամեն դասերուն արդարութիւն լինելու համար Քրիստոնեայք իրենք զիրենք կառավարելու են։ Այս վարդապետութիւնը լիովին ապացուցուած է։ Ասիական Թիւրքիոյ ո՛ր մասն ամենափայլուն վիճակի մէջ է — Լիբանան։ Այս տարբերութիւնը կրնի տարբերութենէն յառաջ եկած էր, այսինքն թէ շատ տարիներէ Ի վեր այդ գաւառին մէջ կառավարութիւնը քրիստոնէից ձեռքը կը գտնուի, և Թիւրք զօրքն այն ժամանակ միայն անգ կրնայ մտնել, երբ նոյն ինքն կառավարչին կոդմանէ կանչուին։ Արմենիա անուանի ճանաչուած գաւառը 250 մղոն երկայնութիւն և 200 մղոն լայնութիւն ունի զրեթէ։ Այս գաւառին ժողովրդին երկու միլիոնի չափ է։ Քրիստոնեայք բնիկ ժողովրդեան մեծամասնութիւնը կը կազմեն։ Համայն ժողովրդեան կիսուն չափ են, բայց բնիկ ժողովրդեան հետ բաղդատամբ մեծամասնութիւն են։ Կառավարչուէր այս գաւառը նահանգ մ՚ընել, Թիւրքիոյ հպատակութեան ներքև, բայց Քրիստոնեայ կառավարիչներով, յորում բարեկարգութիւնը պաշտպանուի հաստատուն ոստիկանութեամբ մը, և որ Օսմ. կառավարութեան որոշ տուրք մը վճարէ։ Կը խնդրուի որ այս նահանգին ներքին վարչութիւնն, օրէնքներն և դատաւորները նոյն իսկ ժողովրդեան ձեռքը գտնուին։ Այս է հաստատեալի Հայոց պահանջած հանգստ դարմանը։ Հայք զայս կը խնդրեն ոչչափ Քրիստոնէից՝ նոյնչափ և խլամաց օգտին համար։ Զայս կապացուցանէ Լիբանանու դրութիւնն, ուր մահմետական ժողովուրդ մը քրիստոնեայ կառավարչայ ներքև կը գտնուի։ Լիբանանու նէն զուրս գտնուող տեղեր Լիբանանու հետ միանալու փափաք յայտնած են։ Այս պարագայն կատարեալ պատասխան մ՚է անոնց, որք կրսեն թէ Իսլամք Քրիստոնէից կառավարութիւնը չեն ընդունիր, և պատճառ մ՚է որ Անգղիական կառավարութիւնն անմիջապէս ձեռնարկ մ՚ընէ այս խնդրոյ մէջ։

«Արևելեան խնդիրը չունի ուրիշ ծիրդ մը, որ սակէ աւելի արագ դարմանի կարօտ լինի։ Երկու պատճառաւ Արմենիա Թիւրքիոյ ամենակարևոր կէտն է Թիւրքիոյ Ասիական երկիրներուն մէջ։ Նախ՝ Արմենիա Ռուսիոյ կից է։ Ես չեմ անցնիր որք կը գտնեն թէ Ռուսիա զԱրմենիան գրաւել կուզէ, և կամ, եթէ գրաւէ՝ այս երկրին (Անգղիոյ) համար սարբերութիւն մը կը լինի։ Բայց եթէ Ռուսիա ուզէ Արմենիան գրաւել, ընելու լաւագոյն բանը Ռուսիոյ միջամտութեան ամեն պատրուակ միջոցէն վերցնելն է, արագ դարման մը ասնելով ներկայ վիճակին։ Եթէ անցեալն մէջ այդպիսի դարմաններ Ի գործ դրուէին, Ռուսական զօրքն երբէք գ՚Խանաթ չէին անցներ։ Երկրորդ, Արմենիա Սուլթանին Ասիական ստացուածոց մէջ միակ երկիրն է, ուր գարգացման և բարգման յոյսեր տուող ժողովուրդ մը կայ։ Արմենիա նշանաւոր անձանց շարք մ՚արտադրած է։ Արևելեան Եւրոպոյ մէջ ամենէն նշանաւոր անձանց երեքն Հայ էին։ Կոմս Մելիքոֆ, Նուբար փաշա, և Անգղիոյ մէջ Պարսկաստանի այժմեան դեսպանն, որ իւր գերազանցութեան Լանսդոյնի ամենամեծ դեսպանն եղած է, Հայազգի են։ Հայք փայլուն հանգամանքներ ունին, սակիր գատ յոյժ գործնական ցեղ մ՚են և ոչ թէ պարզ երազասէրներ։ Նաև, ինչպէս սակայն ամբաստանուած են, անկախ իշխանութիւն մը հաստատելու փափաք չունին։ Իրենց բոլոր խնդրանքն, որ կը յուսամ թէ կրնայ վասահելի իրենց, ինքնակառավարութիւն է։ Արևմտեան Ասիոյ մէջ զարգացման և բարգման միակ յոյսը կուսան, և Անգղիոյ համար շատ ուշ չէ ձեռնարկ մ՚ընել այս նկատմամբ։ Բայց յապաղումն այս գործն աւելի կը դժուարացնէ, և Քրիստոնեայ և Իսլամ ժողովրդոց միջև կեցող թշնամութիւնն աւելցնելու կը ծառայէ։

«Հետևաբար, մեզ համար ամենէն դիւրին ճանրան անմիջապէս բան մ՚ընելու աշխատիլն է։ Ես անանցնիմ եմ, որք կը՝ հաւատան թէ նախորդ նախարարութիւնն Ասիական Թիւրքիոյ նկատմամբ բարի դիտաւորութիւններ ունէր. բայց իւր պակասութիւնն էր այդ դիտաւորութեանց գործադրութեան համար ապրում և կարուկ աշխարհավարութիւն մը չը բռնէր։ Արդի նախարարութիւնը բարեբաղդաբար նախորդ նախարարութեան պակասութիւններէն զերծ է։ Կրնայ ըսուիլ թէ (Անգղ.) կառավարութիւնն իւր ձեռքն ուրիշ բազմաթիւ խնդիրներ ունի. բայց իմ կարծիքս այն է որ գանգք միտ մի կարգադրելու աշխատիլ ո՛չչափ դիւրին է, ամենը մէկէն կարգադրելու աշխատիլն ալ նոյնչափ դիւրին է։ Այս պարագայից մէջ կրնամք փստաւութեամբ հրաւէր կարգալ մեր առաջին նախարարին, որ քանիցս իւր յայտարարած ըսկըզբունքներն Ի գործ դնէ։ Վստահ եմ որ Անգղիոյ արդի կառավարութիւնն այս խնդիրն յառաջ կը տանի իւր զօրութեան և բարգման մեծութեան արժանի ոգով մը, և թէ իւր ազդեցութիւնն և Ի հարկին իւր զօրութիւնն Ի գործ կը դնէ այնպիսի կառուցեալ բարենորոգումներ ձեռք բերելու համար, որք քաղաքակրթութեան հին վայրերն իրենց առջի բարգաւաճ վիճակին վերադարձնեն։ Վերջացնելով՝ Պ. Գլադսթոն խնդրեց որ Արմենիոյ, Փոքր-Ասիոյ և Սուրիոյ վիճակին վրա պաշտօնական նոր թղթերը խորհրդարանին հաղորդուին։

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

ԲԱԳՈՒԱՆ, 24 օգոստոսի։ Ա.յսօր հասան այստեղ մի գերմանական և երկու անգլիական նաւեր։ Այժմ Բաղուայի մէջ ընդամենը 14 պատերազմական նաւեր են հաւաքված։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

*) Բան մեր համոզման, բարեպաշտ և խղճամիտ Իսլամ մը բիւրապատիկ լաւագոյն է քան անիծեալ և անիրաւ քրիստոնեայ կամ հայազգի պաշտօնատար մը։

Ս. Թ.